



ՀԱՅՈՒԹՎԱԿԵՐ

1890

ԴԵԿԵMBER

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Փ

ՆԵԲՐՈՎՔ ԵՒ ԱՇՏԱՐԱԿՆ ԼԵԶՈՒԱՑ



Որբ նոյայ սերունդքն արարատեան գաշտերուն մէջ տարածուելով հաստատուեցան, արագ արագ կը բաղմանային . այնպէս որ բռնադատուեցան դարձեալ բաժնուի նոր բնակարաններ փնտուելու համար, յետ կանխաւ բաժնուած ըլլալու, և այս անգամ՝ ոչ իբրեւ պարզ տոհմիք, այլ ընդ ամենայն աշխարհ։ Եւ նոյն ատեն ահա, բատ պատմութեան Աստուածաշունչ Գրոց, մոռերնին եկաւ յանդուգն խորհուրդ մը, հոչակաւոր աշտարակը շինելու. « Եկայք, ըսին, շինեսցուք մեզ քաղաք և աշտարակ, որց գլուխն մինչև յերկին, և արասցուք մեզ անուն յառաջ քան ըզսփուելի վերայ երեսաց ամենայն երկրի»։ Մեղանչեցին ուրեմն ունայնամութեամբ և հպարտութեամբ, ըստ Սրբոյն Հերոնիմեայ և ըստ բազում մեկնըչաց. և այս պատճառաւ ահա պատժուեցան յԱստուծոյ. հպարտութեան հետ գարձեալ կը միանար ապստամբութիւն ընդդէմ Աստուծոյ և ընկերական իշխանութեան։

Մոքերնին դրեր էին, կ'ըսէ Յովսեպոս Փլափիոս, թէ առ նախանձու Աստուած բաժանեալ կը պահէր զիրենք, որպէս զի կարենայ

28

զիւրաւ զիրենք սանձել, ուստի հոն կեցան Աստուծոյ անհնազանդ ըլլալու համար. և օր ըստ օրէ յանդգնագոյն կը լլային յանարգեն զԱստուած. միով բանիւ նոր բառով ըսելու համար՝ աղատութիւն գաղափարաց հրատարակեցին Ներբովիթ, կը յաւելու Յովսեպոս, որդի Քուշայ՝ Քաջասիրաւ և հզօր ըլլալով՝ կը համոզէր զայլս, ըսելով, թէ Աստուած չէ տուիխն երջանկութեան մարդկան, այլ իրենք իրենց զօրութեամբ ի ձեռս կը բերէին զայն. և այսպէս հեռացնելով զմարդ յերկիւղէն Աստուծոյ՝ կ'առաջնորդէր իրենց բռնակալութեամբ և բռնադատութեամբ. Այլ վախնալով որ կրկին յրհեղեղ զրկէ Աստուած երկրիս վրայ, բռնադատեց զիրենք այնպիսի աշտարակ մը շինել, որ կարենայ ջրոց յաղթել, բազմութիւնն մեծապէս յօժարեալ էր ի հնազանդութիւն Ներբովմայ, խիստ ծանր երենալով իրենց Աստուծոյ հնազանդիխն. և ամենայն փութով աշտարակն կը յառաջէր ի ձեռն բազմաթիւ արանց, ի վեր քան զամենայն ակնկալու թիւն, Այնչափ լայն էր՝ որ նայելու ատեն բարձրութիւնն կը կորսուէր առնել: կը շինէին զաշտարակն կարէ միացեալ աղիւաներով, որպէս զի ջուրն ներս իժափանցելով չկործանէ: Աստուած տեսնելով զմարդիկ այնչափ յիմարեալ, և չուզելով յնշել զանոնք, ինչպէս երբեմն, ճգեց իրենց մէջ զխառնակութիւն լեզուաց, որպէս զի այլ և այլ լեզուով խօսելով՝ անկարող ըլլան զմիմեանս հասկընալ: Բարել (խառնակութիւն) կը կոչուի այն աեղն՝ ուր շինեցին զաշտարակն, լի գուաց խառնակութեան պատճառաւ որ հոն ունեցան. վասն զի բարել երբայցերէն լեզուաւ խառնակութիւն կը նշանակէ: (Հնութիւն երբ. զիրը Ա. գլ. ժ. 8, 9): Յովսեպոս ի հաստատութիւն այս պատմութեան վկայութիւնն կը բերէ ի Սիրիլլայէ և յեստիոսէ (Ետիօօ),

Ըստ Սրբոյն Հերոնիմոսի (յեսայի զլ. ժԴ), այս աշտարակս պիտի ըլլար 4000 ոտք բարձր, որ կը համապատասխանեն իտալական մը զոնի. և այս համեմատութիւն պակասութիւն չէր ցուցընէր նկատելով մեծ լայնութիւնն զոր Յովսեպոս կ'ընծայէ աշտարակին:

Քէր Բորդըր անդղիացին 1817 – 1820 ճամբորդութիւն ըրաւ հին բարելոնի տեղերը, և կը համարի թէ բարելայ հին աշտարակին մնացորդներն գտաւ բարձրագիր տեղ մը, և կը պնդէ իսկ թէ բազմաթիւ ուղեաց հետքեր գտաւ, որոնք շրջելով աշտարակին չորս կողմն մինչև զագաթն կը տանէին զմարդ. ուր դրուած էր բելայ պատկերն. ասկէց զատ տեսաւ դեռ շատ ըրուներ՝ շինուածոց մնացորդներով.

Կը գտնուին դեռ աղիւաներ, ինչպէս նկարագրած է Աստուածաշունչ Գիրքն Բաբելոնի աշտարակաշինութեան համար. անսահման զաշտագետին մը ծածկուած է այս աղիւասոց բազմութեամբ. թէպէտ հազարաւոր տարիներէ ի վեր կը փոխադրեն զանոնք այլուր. և ի. լիլա քաղաքը՝ որ կը գտնուի հին բարելոնի մերձակայքն՝ այս աղիւաներով շինուած է:

Քաղղէական տարեգիրք լիովին կը հաստատին Աստուածաշունչ Գրոց պատմութիւնն, զոր երայական աւանդութիւնք անխախտ և հաստատ կը պահեն :

Աբիդենոս Բերասոսի համառօտիչներէ մէկն՝ հատուածի մը մէջ զոր Եւսերիոս առ մեզ հասուցած է (Պտր. աւետ. գիրք թ) և Սինկել-լոս, այս իմաստները կը դնէ . և կը պատմուի թէ առաջին մարդիկ, կարի հպարտանալրվ իրենց զօրութեան և բարձրութեան վրայ (Հսկայք) արհամարհէլրվ զաստուածոս, ձեռք զարկին աշտարակ մը շինելու, որոյ գագաթն մինչեւ երկինք հասնի, այն տեղն ուր արդ Բարելըն է : Արդէն կը մերձենար երկնից, երբ հողմոնք հասան յօգնութիւն աստուածոց և կործանեցին զրովանդակ գործն շինողաց զիխոց վրայ : Կ'ըսեն թէ մացորդքն և աւերակը Բարելոնի մէջ դեռ կը տեսնուին : Եւ աստուածք լեզուաց զանազանութիւնն մտուցին մարդկանց մէջ, մինչ նոյն ատեն ամէնքը մի և նոյն լեզուով կը խօսէին : Եւ պատերազմը բացուեցաւ ի մէջ կունոսի և Տիտանոսի : Ուր աշտարակն շինեցին՝ արդ Բարելոն կը կոչուի, լեզուաց շփոթութեան պատճառաւ, վասն զի Բարել երայեցոց մէջ խառնակութիւն կը նշանակէ :

Աղեքսանդր Բազմավակէպ ուրիշ համառօտիչ մը Բերոսոսի, նոյն պատմութիւնն կը յօրինէ Սիրիլայէ քաղելրվ, զոր Յովհեպոս ալ մէջ կը բերէ, և ըստ սրբոյն Յուստինոսի իմաստասէր և մարտիրոսի, Բարելոնին եկած էր և գուստը էր Բերոսոսի : Ահա բնագիրն . և Ամենայն անձն մի լիզու ըլլալով, ոմանք իրենցմէ ձեռք զարկին բարձրացնելու ընդարձակ և ամենաբարձր Աշտարակ մը, որպէս զի այնու մինչեւ երկինք կարենան բարձրանալ : Բայց Աստուած Միրիկ յարուցանելրվ իրենց միտքն շփոթեց, և իւրաքանչիւր տոհմին առանձին լեզու մը տուաւ, ուստի այն քաղաքն կոչուեցաւ Բարել : Յետ Ջրհեղեղի կ'ապրէին Տիտանոս և Պիռմիթես, երբ Տիտան պատերազմը բացաւ ընդգէմ կունոսի :

Այս երկու համառօտազրոց հեղինակութեան պէտք է յաւելուլ և Եստիոսին և Մովսէսի Խորենացւոյն, որ Հայոց հնագոյն և հոչակապանծ պատմաբանն է : Եստիու՝ զոր մէջ կը բերեն Յովհեպոս և Եւսերիոս, Հետեւեալ կարևոր իմաստն ունի . և Քահանայք կ'ըսէ : որ ազատեցան, մէկտեղ առին զզ ործիս պաշտաման Ենիալիոյ Արամազդայ և եկանի Սենաար, ի Բարելոն : Բայց այս տեղէս ալ մերժուեցան՝ դարձեալ լեզուաց զանազանութիւնն մտնելով . ուստի այլ և այլ տեղեր գաղթականութիւնն հաստատեցին, մնալով հոն՝ ուր դէպէն կամ Աստուծոյ տեսութիւնն զիրենք կը տանէր ։ իսկ Մովսէս Խորենացի հետեւեալ իմաստն կը դնէ, վկայելրվ միանդամայն թէ ամենահին քաղղէական գրչէ առած է : զոր Մեծն Աղեքսանդր թարգմանել տուեր էր, և պարգևեր էր յետոյ Պարթեական թագաւոր մը

այլ թագաւորի, և այսպէս կը դրէ. « Ահաւոր և տարօրինակ էին նախկին աստուածքն (նահապեաք), հեղինակք մեծագոյն բարեաց աշխարհի, և նախապատիլլք տիեզերաց բազմապատկութեան մարդկանց. Այս աստուածներէն բաժնուեցաւ Հսկայից ցեղն՝ որոնք հրեշտանմանք էին, անյաղթ զօրութեամբ, հսկայաձև հասակով, որք և հըպարտութեամբ գաղափար ունեցան Աշտարակ շինելու. Արդէն սկըսեր էին, և ահա ահաւոր հողմ՝ մր, աստուածային բարկութենէն չնեալ, կործանեց շէնքն. Աստուածներն՝ տալով մարդկանց լեզու որ այլք կարող չըլլասն հասկնալ, ձգեցին իրենց մէջ խառնակութիւն և շփոթութիւն. Այս անձանցմէ մին էր Հայկ Գոկ (Մագոդ) որդի թարթի, իշխան հոչականուն, քաջասիրտ, զօրաւոր և աղեղնաձիգ, և այլն. Շմիթ, Քաղդ. Տիեսութիւնք ի վերայ Եննդ. եր. 49. »

Այս պատմութիւնս՝ որ իրեն հիմն ունի քաղդէական ամենահինգրիներ, կատարեալ կը համաձայնի բիրոսոսի յիշած իմաստներուն և իւր համառօտագրոց Այս ամէն յիշատակութիւններէն յայտնի կը տեսնուի թէ որշափ խորին և հաստարմատ էր քաղդէաստանի ժողովը. գոց մէջ լեզուաց Աշտարակին աւանդութիւնն, որ կատարելապէս համաձայն է իւր ամենափոքր իսկ հանգամանաց և էական գործոյն մէջ Աստուածաշունչի պատմութեան :

Մանաւանդ թէ մեր օրերն այս պատմական գործն օտար չմնաց ժամանակին ասորագիտաց ուսումնասիրութեան և քննութեանց. Շմիթ հոչակաւոր գտիչն ջրէեղեան տախտակաց, գտաւ նաև սեպաձև գրովք ասորի Տախտակի մնացորդներ, որք արդ նինուէէ բերուեցան և կը պահուին բրիտանական Մուսէնին մէջ, որոց վրայ գրուած է Բարելոնի Աշտարակին պատմութիւնն :

Այս փոքրիկ տախտակն կը բովանդակէ հինգ կամ վեց սիւն հատուածներ, և կը համարուի թէ ուրիշ տախտակ մ'ըլլայ յառաջ քանզայս. և ահաւասիկ թարգմանութիւնն .

Սիհն Ա

1. անոնք. Հայրը...
2. անոր սիրուն չար էր
3. Ընդդէմ Հօր ամենայն Աստուածոց ամբարիշտ էր
4. իրեն. իր սիրուն չար էր
5. Բարելոն հնազանդեալ
6. (փոքրունք) և մեծք, շփոթեց իրենց լեզուն
7. Բարելոն հնազանդեալ
8. (փոքրունք և մեծք) շփոթեց իրենց լեզուն
9. իրենց պարիսպն (աշտարակն) բոլոր օրն կը հիմնէին

10. իրենց պարսպին ի զիշերի
 11. բոլորովին վերջ կու տար .
 12. ի բարկութեան այսպէս խօսեցաւ
 13. հեռու ցըռուելու համար երեսն դարձուց .
 14. Այս հրամանն տուաւ , իրենց խորհուրդն խառնակեցաւ
 15. ընթացքն խորոտակեց
 16. հաստատեց սրբավայրն .

Կան յետոյ ուրիշ երեք տողեր ալ որ Ե կամ Զ սեան վերջիններն
 են , և որոց մէջ են .
 13. Դասնապէս լացին ի Բաբե
 14. մեծապէս ցաւեցան
 15. իրենց թշուառութեան վրայ

Ասորական տախտակին այս հատուածոց մէջ ունինք անդրադար-
 ձութիւն մը Ծննդոց գրոց իւր զլխաւոր հանգամանաց մէջ : Մեղքն
 հպարտութեան որ զրդուց զբարկութիւն Աստուածոց՝ առաջին տո-
 ղերուն մէջ . և իրենց հպարտութեան գործն զոր կը բացատրէ իննե-
 րորդ տողն , շինեցին պարիսպ մը , (ասորական լեզուաւ բազիմբու) ,
 ամրոց : Եթեայ ապա և իրենց պատիմն , կործանումն իրենց գործոյն
 (տողք 10, 11) , և իրենց այլ և այլ տեղ ցրուին (տող 13) : Ասոր
 մէջ կը խօսի նաև իրենց լեզուին խառնակութեանը վրայ . բայց այս
 առոյդ չէ բոլորովին , ինչպէս կը նշանակէ Շմիթ այն իրենց խօսքն
 բառով :

Ուրիշ կարեսոր յիշատակարան մ՞ալ ունինք Աստուածաշնչին այս
 պատմութեան վրայ՝ Բաբելական Աշտարակին նկատմամբ , ի սեպաձև
 արձանագիրս Նարուգործնոսորի (604-561 յառաջ քան զբրիստոս) ,
 որ գտնուեցաւ ի Բորսիպպա (Borsippa) , որ Բաբելոնի մեծ քառան-
 կեան հարսաւային արենելեան անկեան վրայ շինեալ բաղաք մ'է : Հոն
 կը տեսնուին մնացորդքն մեծ դղեկի մը , և այլ և այլ տաճարաց , յո-
 րս կը պաշտէին Ադար աստուածն , թէն աստուածն , իին աստուածն և
 Նանա աստուածուհին : Խակ ամենայն աւերակաց մէջ քան զամենե-
 սին մեծայաղթ քանակաւն և հնութեան փառաւորութեամբ՝ այն
 դոր Արաբացիք կը կոշեն Բիրս-Նեբրովիթ (Birs-Nimrud) , Աշ-
 տարակ Նեբրովիթայ՝ Բլուր մ'է խեցեաց և կղմնարաց , որոյ գագաթն
 46 մետր բարձրութիւն ունի , և հիմն մինչև 700 մետր լայնութիւն և
 նոյնչափ ալ շրջապատ : Հոն կը գտնուին ահագին ժայռեր , պարսպի և
 սեանց մնացորդք մինչև ցարդ , յորս ոմանք մինչեւ 10 մետր բարձրու-
 թեամբ . բայց այնչափ աւերեալ և խորտակեալ յամենայն կողմանց ,
 որ չէ հնար առաջին ձեզ գուշակելու Շինուածոյն չորս անկիւններն
 դարձած էին ի չորս զլխաւոր կողմանս , և անոնցմէ Ռոլէնսըն

(Rawlinson) գուրս հանեց չորս գլաններ թրծեալ հողոյ, որոց իւրաքանչիւրն ունին նոյն բնագիրն 60 տողով, յորս կ'աւանդուի հին հիմնարկութեան պատմութիւնն, և յետոյ վերանորոգութիւնն ի ձեռնորդ Նարուգողոնսորայ: Այս զանք կը գտնուին ի Բրիտանական Մուսէնի, և ահա թարգմանութիւնն:

4. Ես եմ Նարուգողոնսոր թագաւոր Բաբր-Իլու, ծառայ հաւատարիմ, առհաւատչեայ անփոփոխ սիրոյ Մարթոքեայ, գերագոյն իսաքքու որ կը մեծացնէ զփառս Նարուի, փրկիչ է, իմաստուն՝ որ մոտագիր է հրամանաց գերագոյն Աստուծոյ, Սաքքա-Նաքքու առանց մեղաց, վերականգնող Բիթ-Սագգաթու և Բիթ-Զիտա, անդրանիկ որդի Նարու-պալ-ուսուրի, թագաւոր Բաբր-Իլուի: Ես:

5. Մարթոք կ'ըսենք մենք գերագոյն Աստուծոյ, նա զիս ծնաւ. նա հրամայեց ինձ վերականգնել իւր տաճարներն: Նարու որ վերակացու է Երկնից և Երկրի գնդոց, յանձնեց ի ձեռս իմ զգաւազան արդարութեան:

6. Բիթ-Սագգաթու է Երկնից և Երկրի տաճարն, բնակարան Տեառն Աստուածոց, Մարթոքեայ: Ես ծածկել տուի անարատ ովկով իւր ինքնակալութեան տաճարն:

7. Բիթ-Զիտա է բնակարանն յաւիտենական, ես վերստին շինեցի զայն 'ի հիմանց. կատարեալ ըրի իւր գեղեցկութիւնն արծաթով, ոսկով, մետաղօք, յարգի քարերով, ջրդեղեալ կղմնարօք և հերձի և մայրի փայտերով:

8. Ես վերստին շինեցի զտաճարն ի հիմանց Երկրիս, զՄիգուրատ Բաբ-Իլուի, և կատարեցի կղմնարօք և պղնձով. Ես բարձրացուցի ըզգագաթն:

9. Ես կ'ըսեմ զայս. Տաճարն իօթն Լուսաւորաց Երկրի, Միգուրատ արն Բորսիգպայ, շինուեցաւ հին թագաւորէ մը: Այս կը ծածկեր 40 չափ հողոյ, բայց ինքն շրարձացուց զգագաթն. յետոյ մարդիկ հեղեղման ժամանակ թողուցեր էին, և որոյ ընթացքն շէին կարգաւորած: Անձրեք և մրրիկը յորուեր էին ի կաւոյ գործերն և իւր որմոց ծեփն. կաւն քակուեր էր հողոյն հետ և աւերմոնց կյոտ մը կը ձեւացնէր: Ես շփոխեցի տեղն: Ես շդրի ձեռք իւր դիմինին վրայ: Խաղաղութեան ամսոյն մէջ, յաջող օր մը, ես . . . շգործածուած կղմինարն այն ամրակուռ և աղիւս ծեփոյ. Ես գրեցի զփառս անուանս ի . . .

10. Ես ձեռք զարկի այս շինութեանս, բարձրացուցի զգագաթն (այն շինուածոյն). Հիմնեցի, վերստին շինեցի, ինչպէս էր Երբեմն, ինչպէս էր հին ժամանակներն, և բարձրացուցի զգագաթն:

11. Ո'վ Նարու, որդի քու իսկ անձինդ, գերագոյն միտք, որ կը բարձրացնէ զփառս Մարթոքեայ, օգնական եղիր փառաշորք գործոցս: Շնորհէ յաւիտեան իմ ցեղիս մշտնշենաւորութիւնն. և հանդերձեալ

ժամանակաց համար յաջող արգասաւորութիւն, գահուս հաստատութիւն, սրոյս յաղթութիւն, ապստամբաց խաղաղութիւն և թշնամի հողոց տիրապետութիւն: Գրէ իմ աւուրցու երջանիկ ընթացքն յաւիտենական տախտակին սեանց վրայ, որ կ'օրոշէ զգնացս երկնից և երկրի, և զրէ ի նմա զարգասաւորութիւն:

9. Նմանէ ովլ Մարթոք, թագաւոր երկնից և երկրի, հօրն որ ծընաւ զինքր, օրհնէ գործերս, պաշտպանէ տէրութիւնս:

10. Նարու-գուղուր-ուառուր, թագաւոր որ կը բարձրացնէ զաւերակս, չնորհք գտնէ առջնեւ:

Արդ Բիթ-Զիտա՛ որ կը յիշուի այս արձանագրութեան մէջ, կը վերաբերի մեր վերը գրած աւերակաց: Հսկայաձեւ բուրգ (Ծիգուրատ) մ'էր, քառանկիւն հիմամբ, զրեթէ 80 մեդր բարձրութեամբ, եօթն յարկօք. այսինքն եօթն միմեանց վերադիր աշտարակօք որ յերկայնութեան կը նուազէին. որոց վերջինն ի ծայր բրդին՝ սենեակ մ'ունէր, այն է Տաճարն Մարթոք Աստուածոյն ամենահարուստ կերպով զարդարեալ, և որոյ նուիրեալ էր չէնքն: Եօթն յարկերն աշտարակներէն ձեացեալ՝ տարբեր բարձրութիւն ունէին. և իւրաքանչիւրըն ի բույ և ի շաղանէ աղիւսոց, կ'օրոշուէր տարբեր գունով ըստ աստեղ կամ մոլորակին՝ որոյ նուիրեալ էր, սկսելով ի հիմանէ՝ որ սև էր. յետոյ սպիտակ, նարնջագոյն, կապոյտ, կարմիր, արծաթ, ոսկի. և կը համապատասխանէին ըստ բարելունական և ասորական գաղափարին ի կռոնոս, յԱստղիկ, յԱրամազդ, ի չերմէս յԱրէս, ի Լուսին, յԱրեգակն: Ուստի և բիթ-Զիտա կոչուած է սեպաձեւ արձանագրութեանց մէջ իօրն լուսաւորաց երկնի տաձարըն ևս:

Արդ կը կարծեն որ Բիթ-Զիտան կանգնեալ ըլլայ Բարելի Աշտարակին տեղն. նաև նոյն հսկ Բարելի Աշտարակն ըլլայ նորոգեալ ի նաբուգողնոսորայ. և այս կարծէս կը հաստատեն նախ արևելքան հին աւանդութիւնք և Բորսիպպա անունը, որ ըստ Օրբերտի, կը նշանակէ Աշտարակ լեզուաց: Յիրաւի Բորսիպպայի Ծիգուրատն վերայիշեալ Նաբուգողնոսորայ արձանագրութեան մէջ, ըստ Օրբերտի էր Բորսիպպայի հնագոյն յիշատակարանն, և իւր հիմնագրին անունն կորսուեր էր ժամանակին հնաւաւորութեան պատճառաւ. ուստի և շնուռութիւնն փոխանակ անոււամբ պատմական ցեղէ իշխանի մը մատուցանելու ինչպէս սովորութիւն էր ուրիշ մակագրութեանց մէջ, հոս առանց որոշելու թագաւորի մը կ'ընծայուի, և ըստ լընորմանի, հընագոյն թագաւորին, այսինքն Բարելունի առաջին թագաւորին, որ պիտի ըլլայ Ներբովիթ, հաւանականարար նոյնն ընդ ինզուրաբայ, Բարելունական մեծ դիցազնարանաթեան մէջ. Ներբովիթն ծննդոց գրոց որոյ անունն յասորի և յերբայական լեզու կը նշանակէ ապստամբ, որ և այն հպարտ հսկայից առաջնորդն եղած պիտի ըլլար, որք ուղե-

ցին բարձրացնել յերկինս զԱշտարակն . Եւ Ներովթայ կ'ընծայուի իրգը Եփրատայ եղերաց բնակիչներէն Աշտարակին առաջին շինու թիւնն , ինչպէս կը նշանակէ Բիրս - Ներովթա անունն (Աշտարակ Ներովթայ) , որ ամենահին ժամանակէ ի վեր կ'ընծայուի այս հսկա յանման աւերակաց կոյտին , ինչպէս ի վերոյ յիշատակեցինք :

Քաղդէացոց այս տեղական աւանդութեան պէտք է յաւելուլ բարելոնական Հրէիցն , որք ի հսկայածն արձանն Բորսիպապայի կը ճանչնան զհին աշտարակն Բարելոնի : Բարելոնի Թալմուտին մէջ կ'ըսուի թէ ի Բորսիպապա հանգիպեցաւ լեզուաց խառնակութիւնը . և հն յիշուած առասպելին մէջ կ'ըսուի թէ և Բորսիպապայի օդն զյիշողութիւնն կորանցնել կու տար . վասն զի հոն մարդիկ մօսցեր էին իրենց առաջին լեզուն : Թալմուտի ուրիշ առասպել մ'ալ կը պատմէ թէ և Հարցնելով մէկուն , թէ որ երկրէն ես . պատասխանեց . Բորսուպէն , Ոյսպէս շըսես պատասխանուեցաւ իրեն , այլ պիտի ըսես Բոլոսիփէն , վասն զի այն երկիրն է ուր շփոթեց Աստուած զլեզու ամենայն երկրի : Իսկ միջին դարու մէջ , երբ Բնենիամին Դուտելացի բարունին ուղերութիւն մ'ըրաւ Նավարայէ ի Բարելոն , տեղոյն Հրէայր ցըցուցին իրեն Բիրս - Ներովթայ աւերակներն , իրբ Բարելոնի Աշտարակին տեղն (վիկոռու եր . 253) .

Արդ որչափ ալ Բարելոնի Աշտարակին մեծ գէպքն կատարուեցաւ Սենար դաշտին մէջ , առաջին տեսնող և վկայ ունեցաւ դրովանդակ ազգ մարդկան : Ուսափ և նոյն աւանդութիւնն պահուեցաւ նախկին աւանդութեան ուրիշ ճշմարտութեանց հետ , ոչ միայն առ Քաղդէացիս և առ մերձաւոր ժողովուրդս , այլ նաև առ այլ ազգս , որ ցրուեցան հեռաւոր աշխարհներ երկրիս վրայ . Դիցաբանութիւնն , ամենածմարիտ և խկական պատմութիւնն , նկարագրեց զգործըս այլաբանօրին Ցիտանաց սանդիսյն պատկերին մէջ . Աղեքսանդրը Հումպոլդ , առ Մեքսիքացիս Զրհեղեղին աւանդութենէն դուրս դառաւ նաև հետեւեան . պատմութիւնն բրգամն շինուածոյ , կանգնեալ հպարտութեամբ Մարդկանց և աւերեալ բարկորեամբ Աստուածոց . և այս բրգաձև շինուածէս յետոյ նախկին Տարեգիրք Մեքսիքականը կը նշանեն իրբ տեղ՝ ուր Աստուած իւրաքանչիւր ընտանեաց առանձինն շեղու տուաւ : Կը յաւելու ես Հումպոլդ թէ այսպէս ամերիկեան աւանդութիւնք ամենահին ժամանակաց՝ կը գըտնուին նաև յԱսիս Պրահմայի հետեւողաց մէջ և Տարտարից արևելան Եթան բարձրաւանդակին Շիռանի մէջ . (Հիւմպոլդ , Տեսութիւն ի վերայ Քորտիլեան լեր . հտ . Ո . եր . 338) : Զինացիք շեն կարող կորունցնել զյիշատակս , վասն զի ձեն և անունն Աշտարակին իրենց զրոց մէջ անցած են : Իրենց լեզուին գիր մը , որ ողջոյն հրաժեշտի կամ բաժանումն կը նշանակէ , կը կերպարանէ զխորհրդական Բարել - Աշտարակն :

Եթէ մէկն ուղենայ մեզ դէմ զնել սուրբ Գրոց խօսքին համար՝ յորում Բարել խառնակութիւն կը նշանակէ, ամենևին արժէք մը չտնի. գաղափարական (ideografico) նշաններն որք կը ծառայեն խօսքերը գրելու, կը հաստատեն ընդհակառակն թէ կը նշանակէ՝ Դուռև իդու. այսինքն Աստուծոյ,

Բարել բառը եթէ առնենք իրեւ խառնակութիւն, կը պատաս- խանէ հմտաբար Օբրերդ այս առարկութեան, բացարձակ կերպով քաղդէական լեզուն կ'ենէ. և հակառակ է այս երրայական լեզուի օրինաց. վասն զի այն լեզուին մասնաւոր յատկութիւն մ'է կրկնել առաջին արմատական բաղաձայնը: Ուստի և յասորա. քաղդէա- կան լեզու խառնակութիւն նշանակելու համար պէտք է ըսել Բար- քել կամ Բիրբիլ. և յիրաւի Բիրբիլ այս լեզուին գործածութեան մէջ կը նշանակէ խառնորդ, խառնակութիւն. մինչդեռ յերրայա- կանն պէտք է կազմել բիլբալ կամ բիլբուշ. և յիրաւի բիլբուշ բա- րունական ճշգութեամբ ըսել է խառնակութիւն. Ուստի պէտք է զուրցել որ քաղդէացի ծագմամբ այս բառը՝ Մովսէս կը ճաննար զայն՝ Արբահամեանց Քաղդէաստանէն բերած աւանդութեամբ, և թէ այս բառու ծագեցաւ նոյն իսկ լեզուաց խառնակութեան միջոց. ուստի կ'ենթագրուի որ սա ի՞կ տուաւ ծագումն Բարելոն քաղա- քին, որ և համաձայն է սուրբ Գրոց:

ՈՒՐ ԷՐ ԵՐԿՐՄ.ԻՈՐ ԴՐՍ.ԽՏՆ

ՈՒՐ ԷՐ ԵՐԿՐԱՅՈՐ ԳՐԱԲԻԱՆ : Խնդիր մ'է այս որ ոչ միայն Հաւատացելոց հետաքրքրութիւնը կը շարժէ, այլ և բանաւորակա- նաց, որ ի ձեռն իրենց ուսմանց կը ջանան խօսիլ մարդուս սկզբնա- կան ծագման վրայ՝ ըստ Աստուածաշընչի. և եթէ եղածին չեն հա- ւատար, սակայն չեն արհամարհէր պատմութեան հարազատ իմաս- տը գտնենքու. Մեզ ալ կարելի է հոս համառօտիւ տեսութիւն մ'ը- նել, վասն զի այս խնդիրս լուծելու համար բնական գիտութիւնքն մեծապէս նպաստամատոյց են.

Դնենք հոս ծննդոց Բ գլխոյն խօսքերն, յորում կը նկարագրէ ա- ռաջին մարդոյն բնակարանը.

« Եւ տնկեաց Աստուած զդրախան յեղեմ ընդ արևելս, և եղ անդ զմարդն զոր ստեղծ: Եւ բուսոյց Աստուած յերկրէ զամենայն ծառ գեղեցիկ ի տեսանել և քաղցր ի կերակուր, և զծառն կենաց ի մէջ դրախտին, և զծառն գիտելց զցիտութիւն բարւոյ և շարի: Եւ գետ